ԱԼԲԵՐՏ ԱՐՄԵՆԱԿԻ ԽԱՌԱՏՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի վարիչ, ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Արմենակի Խառատյանը 75 տարեկան է:

Ա. Ա. Խառատյանը ծնվել է 1939 թ. օգոստոսի 24-ին (անձնագրով՝ սեպտեմբերի 24-ին), Երևանում, ծառայողի ընտանիքում: Երեկոյան (բաներիտ) դպրոցն ավարտելուց հետո, 1959 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Այն ավարտել է 1964 թ. և մինչև 1966 թ. աշխատել Ապարանի շրջանի Ծաղկահովիտ, այնուհետև Էջմիածնի շրջանի Լենուղի գյուղերում՝ որպես միջնակարգ դպրոցի ուսուցիչ:

Ավելի քան 41 տարի Ա. Խառատյանն աշխատում է ԳԱԱ համակարգում, որից 29 տարի՝ Պատմության ինստիտուտում: Այսպես, 1967–1972 թթ. աշխատել է «Հայկական Սովետական Հանրագիտարանի» Հատուկ գիտական խմբագրությունում, նախ, իբրև սրբագրիչ, ապա խմբագիր, 1973–1985 թթ.՝ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում որպես ավագ գիտաշխատող, գիտական խմբի ղեկավար: 1985 թ. ապրիլից աշխատանքի է անցել Պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, իսկ 1992-ից Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի վարիչն է:

1972 թ. Ա. Ա. Խառատյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը XIX դ. 40–60-ական թթ.» թեմայով, 1986 թ. դոկտորական ատենախոսություն՝ □Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840–1900)□ թեմայով և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան: 2009-ից պրոֆեսոր է:

Ա. Ա. Խառատյանը 1988 թ. հունվարից ստանձնել է նաև Գիտությունների ազգային ակադեմիայի ավագագույն, արտերկրում ևս մեծ հեղինակություն ունեցող պարբերականի՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագրի պարտականությունը: Հարկ է ասել, որ նրա նշանակումը զուգադիպեց Արցախյան շարժման զարթոնքի հետ: Այդ տարիներին «Լրաբերը» (ամենամյա պարբերական էր՝ տպագրվում էր 12 համար, իսկ այսօր՝

ընդամենը 3) խոշոր դեր կատարեց ԼՂ-ի հարցի վերաբերյալ գիտականորեն հիմնավորված բազում հոդվածներ տպագրելով, և դարձավ այդ շարժման առաջամարտիկներից մեկը հայ խորհրդային մամուլում: Կարելի է անվարան ասել, որ Ա. Ա. Խառատյան պատմաբանի սկզբունքայնությունը, օբյեկտիվությունը, քաղաքացիական և գիտական համարձակությունը մեծ դեր խաղացին այդ գործում (տողերիս հեղինակը այդ ժամանակ ամսագրի պատասխանատու քարտուղարն էր): Դրանում կարող է յուրաքանչյուրը համոզվել, եթե թերթի այդ տարիներին լույս տեսած պարբերականի՝ ձեռքից ձեռք անցնող համարները: Հավելենք, որ ամսագրի ամեն մի համարի բովանդակությունը «Ազատություն» ռադիոկայանի մեկնաբան, երջանկահիշատակ Էդ. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ հասու էր դառնում նաև սփյուռքահայությանը: Վերջին տարիներին նս Ա. Ա. Խառատյանի ջանքերով «Լրաբերը» լուրջ ներդրում ունի արտերկրի հայ և օտարազգի հեղինակներին Հայաստանի գիտական հանրությանը ծանոթացնելու գործում՝ ռուսերեն ու եվրոպական լեզուներով տպագրելով նրանց հոդվածները:

Նշենք նաև, որ Ա. Ա. Խառատյանը «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի հիմնադրման օրից՝ 2005 թ., ց'այսօր գլխավորում է նրա հասարակագիտական բաժինը:

Անվանի պատմաբանը հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի, հայ գաղթօջախների պատմության խոշոր մասնագետ է՝ գիտահետազոտական աշխատանքների լայն շրջագծով: Նա իր լուման ունի հայ պատմագրության մեջ՝ գիտական առաջնակարգ արժեք ունեցող և միջազգային ճանաչում ստացած ուսումնասիրություններով: Ա. Ա. Խառատյանի աշխատությունները վերաբերում են տեսական կարևորություն ունեցող այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են՝ արևմտահայերի լուսավորական շարժումը XIX դարում, նրանց Ազգային սահմանադրությունը, հասարակական-քաղաքական հոսանքները հայ իրականության մեջ, արևմտահայ մամուլի մտավոր ու մշակութային արժեքը 1840–1922 թթ., Օսմանյան Թուրքիայի խոշորագույն հայ գաղթավայրերի՝ Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի համազգային նշանակությունը: Այս ոլորտներին վերաբերող 7 գրքի, այդ թվում՝ 4 մենագրության հեղինակ է:

Ա. Խառատյանը լայն ճանաչում ունի ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանի հայագիտական շրջաններում. ԱՄՆ-ում, Իտալիայում, Թուրքիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Ուկրաինայում տպագրվել են նրա աշխատություններից, ինչպես և գրախոսականներ՝ դրանց վերաբերյալ:

Անուրանալի է Ա. Խառատյանի ներդրումը արևմտահայ հասարակական մտքի և մամուլի ուսումնասիրության բնագավառում: «Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից» (1980) և «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840–1900)» (1995) աշխատությունները ասվածի խոսուն վկայությունն են: Մասնավորապես, երկրորդ գրքում բնութագրվել են Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը և նրա էջերում դրսևորված հասարակական միտքն ու դրա ներկայացուցիչները, տրվել է XIX դ. երկրորդ կեսի արևմտահայ իրականության մի շարք հանգուցային խնդիրների վերլուծությունը: Ներկայացվել է Կ. Պոլսից հետո արևմտահայ երկրորդ խոշոր գաղթավայրի՝ Զմյուռնիայի մա-

մուլի և հասարակական կյանքի շուրջ 60-ամյա պատմությունը, արժեվորվել նրա գաղափարական ու մշակութային նշանակությունը ազգային զարթոնքի, լուսավորության, դեմոկրատական մտքի ծավալման գործում: Հայ հասարակական մտքի զարգացման իրողությունների հիման վրա բացահայտվել են արևմտահայ մի խումբ մտավորականների՝ Ղ. Պալդազարյանի, Ստ. Ոսկանյանի, Գր. Չիլինկիրյանի, Մ. Մամուրյանի, Ա. Հայկունու, Գ. Կոստանդյանի, Գր. Մսերյանի, Հ. Կ. Սվաճյանի հայացքները և նրանց հրապարակախոսական ու խմբագրական գործունեության հատկանշական կողմերը:

Արևմտահայ մամուլի և հասարակական մտքի պատմությունը սերտորեն աղերսվում է օսմանյան գրաքննության գիտական և իրավական բովանդակությանը, մի հիմնահարց, որի առաջին և առայժմ միակ հետազոտողը մեզանում Ա. Ա. Խառատյանն է՝ իր բազմաթիվ հրապարակումներով: 1984 թ. նա հրատարակել է «Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը 1858–1896 (վավերագրական նյութեր)» ժողովածուն, 1989 թ.՝ □Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857–1908)□ աշխատությունը: Առաջինում փաստական նյութի հիման վրա ցույց է տրված արևմտահայ մամուլի հասարակական որոշակի միտումները և դրանց նկատմամբ օսմանյան իշխանությունների կամայական, ոչ մի օրենքով (այդ թվում և թուրքական տպագրական օրենքով) չկարգավորված վերաբերմունքը: Երկրորդ գրքում հետազոտվել են արևմտահայ պարբերական մամուլի հասարակական-քաղաքական բովանդակությունը, նրա դերն ու առանձնահատկությունները հայ մտավոր մշակույթի պատմության մեջ: Մամուլի պաշտոնական կարգավիճակն ու իրական կացությունը ներկայացվել են հայ, ինչպես և Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների (թուրքերի, հույների), Կ. Պոլսում եվրոպական լեզուներով հրատարակված պարբերականների օրինակով: Հանգամանորեն լուսաբանվել են արևմտահայ մամուլի իրավական դրության հետ առնչվող հարցեր:

Ա. Ա. Խառատյանի աշխատությունների մի զգալի մասը նվիրված է արևմտահայերի իրավական, տնտեսական ու մշակութային դրությանը՝ հատկապես հայ գաղթավայրերի պատմության կտրվածքով (Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա), որի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XIV– XVII դարերը:

Գիտական երկարատև ուսումնասիրությունների արգասիք է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության մատենաշարով 2007 թ. տպագրված Ա. Ա. Խառատյանի «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV– XVII դարեր)» աշխատությունը: Մենագրության մեջ լուսաբանվել են Կ. Պոլսի գաղթօջախի պատմության մի շարք հանգուցային հարցեր, ինչպիսիք են գաղթօջախի կազմավորումն օսմանյան մայրաքաղաքում, Կ. Պոլսի հայ պատրիարքության հոգևորվարչական նկարագիրը, հայ համայնքի տեղը օսմանյան ավանդական հասարակության մեջ: Մասնավորապես, քննարկվել են բնակչության թվաքանակի, եկեղեցիների պատմության, պատրիարքական իրավասությունների, հայ համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի, հարկային համակարգի և այլ հիմնահարցեր: Աշխատության մեջ լուսաբանվել են նաև հայ կրոնական-հոգևոր կենտրոնների՝ Էջմիածնի ու Կիլիկիայի կաթողիկոսությունների և Երուսաղե-

մի պատրիարքության հետ Կ. Պոլսի պատրիարքության փոխհարաբերությունների ու այդ հենքի վրա վերջինիս համազգային նշանակությունը բնութագրող խնդիրներ: Ուսումնասիրությունը լայն արձագանք գտավ հայրենական և արտերկրի գիտական հասարակայնության շրջաններում: Այսպես, Երևանի «Ազգը», Ստամբուլի «Ժամանակն» ու «Մարմարան», Հունգարիայի «Արմենիան» ծավալուն գրախոսականներով արժևորել են մենագրությունը: Մասնավորապես, Ստամբուլի «Ժամանակ» օրաթերթում (3. IX. 2007) Սևան Տեյիրմենճյանը «Պոլսո գաղթօջախի պատմության մեջ նոր ու լուրջ խոսք մը (ակնարկ Ալբերտ Խառատյանի «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը XV–XVII դարեր» գրքին)» վերնագրով գրախոսության մեջ հանգամանորեն ներկայացնելով մենագրությունը՝ գրել է. «Ալբերտ Խառատյանի Պոլսի հայ գաղթօջախի պատմությանը նվիրված այս հատորը նոր խոսք մըն է հայ պատմագրության մեջ: Առաջին հայացքեն ըլլալով միկրոպատմագրական ուսումնասիրություն մը, կ'ամբողջացնե ԺԵ.–ԺԷ. դարերու հայոց պատմության ընկալումը, ավելի կպայծառացնե անցյալի մութ անկյունները: Գրքի ամենամեծ արժանիքներեն մեկն այն է, որ հեղինակը բոլորովին հեռու է պատճառահետևանքային կապերը միայն տնտեսականով բացատրելու սովետահայ պատմաբաններուն հատուկ վարքեն: Մարդկային հարաբերությունները, կառույցներու առնչությունները, փոխհարաբերությունները վերլուծելու բացառիկ տաղանդ մըն ալ ունի Ալբերտ Խառատյան և իր այս հատկությամբ ներկայացուցած կ'ըլլա նաև գիրք մը, որ պատմագրական ըլլալով հանդերձ, է նաև մարդկային տկարություններու, մոլորություններու, ինչպես նաև հաղթանակներու և բարի վարքերու տարեգրություն մը»: 2009 թ. այս աշխատությունն արժանացավ ՀՀ ԳԱԱ, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության սահմանած «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակին:

2006 թ. Կահիրեում Ա. Ա. Խառատյանի հեղինակցությամբ, առաջաբանով ու խմբագրությամբ լույս տեսավ հայ մամուլի պատմության մեջ իր ընդգրկումներով և գիտավերլուծական խորությամբ աննախադեպ «Հայ պարբերական մամուլի պատմություն» երկհատորյակի I հատորը: Հրատարակության է պատրաստ նաև II հատորը, որի ստվար հատվածները շարադրել է մեր վաստակաշատ հոբելյարը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակության պատրաստած «Հայոց պատմություն» քառահատորյակի III հատորի I գրքում (2010) իրենց տեղն են գտել անվանի պատմաբանի՝ «Հայ հասարակական-քաղաքական հոսանքներն ու շարժումները» բաժինը և □Զեյթունի 1862 թ. ապստամբությունը և նրա համահայկական արձագանքները» ենթաբաժինը:

Հարկ է նկատել, որ Ա. Ա. Խառատյանը կազմել է «Արևելյան մամուլ» (1871–1909)» և «Մեղու» (1856–1865)» հանդեսների մատենագիտությունները՝ ծանոթագրություններով ու ցանկերով (համապատասխանաբար՝ 20 մամուլ ծավալով 1976 թ. և 10 մամուլ ծավալով՝ 2003 թ.):

Նշենք նաև, որ «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորի 2-րդ հատորում (2003) տպագրվել են Ա. Ա. Խառատյանի «Կոստանդնուպոլիս (15–17-րդ դարեր)» և «Զմյուռնիա» ստվար հատվածները: Այս տարի կհրատարակվի

նրա «Արևմտահայ պարբերական մամուլը 1900–1922 թթ.» աշխատությունը, որ վերաբերում է մեր մամուլի առհասարակ չհետազոտված մի շրջանի պատմությանը:

Անվանի պատմաբանը ավելի քան 150 գիտական հոդվածների, հրապարակումների, գրախոսականների հեղինակ է, ունի հանրագիտարանային բազմաթիվ հոդվածներ. այսպես, «Հայկական Սովետական Հանրագիտարանում» (հ. 1–11, Երևան, 1974–1985)՝ ավելի քան 30 հոդված, նույն հանրագիտարանի 12-րդ հատորում (1987)՝ «Արևմտահայ մամուլ» հատվածը, «Հայկական համառոտ հանրագիտարանում» (հ. 1–2, 1990, 1995)՝ 10 հոդված, «Հայկական հարց» հանրագիտարանում (1996)՝ 18 հոդված, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում (2002)՝ 15 հոդված:

Չմոռանանք նշել, որ Ա. Ա. Խառատյանը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև միջնակարգ դպրոցի VIII դասարանի «Հայոց պատմություն» դասագրքի ստեղծման գործում:

Մեր հոբելյարը մանկավարժական-դասախոսական աշխատանքի ավելի քան 40-ամյա կենսագրություն ունի: 1972 թ. ի վեր նա դասախոսում է հանրապետության բուհերում: 1986–1999 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանի լրագրության ֆակուլտետում, 2002-ից՝ նաև Արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժնում: Երկար տարիներ դասախոսել է Երևանի «Գալիք» համալսարանում, կատարել վարչական աշխատանք (լրագրության ամբիոնի վարիչ, պրոռեկտոր): Վերջին տարիներին ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի լրագրության ամբիոնի վարիչն է, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում էլ կարդում է «Հայ գաղթօջախներ» ու «Հայ մամուլի և հասարակական մտքի պատմության» դասընթացները:

Ա. Ա. Խառատյանը տարիներ շարունակ եղել է գիտական մի շարք խորհուրդների անդամ (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, ԳԱԱ ցեղասպանության թանգարան-ինստիտուտի խորհրդի, ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի գիտխորհրդի): Եղել է նաև Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գիտխորհրդի լրագրության մասնախմբի նախագահ:

Նկատենք, որ մեր երկրի բարձրագույն ուսումնական մի շարք հաստատություններից (ԳԱԱ պատմության ինստիտուտից, Երևանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական համալսարանից), նաև՝ արտերկրից (Թուրքիա) բազմաթիվ ասպիրանտներ ու հայցորդներ նրա ղեկավարությամբ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Ա. Ա. Խառատյանը մասնակցել է հայագիտական միջազգային մի շարք գիտաժողովների՝ Երևանում, Տուրին-Ջենովա-Լիվոռնո-Պիզայում, Լոս Անջելեսում:

Տարիների մեր համատեղ աշխատանքի ընթացքում համոզվել ենք, որ Ա. Ա. Խառատյանն իր քաղաքացիական, մարդկային ու բարոյական անուրանալի արժանիքներով՝ բարությամբ, կամեցողությամբ, ձեռք մեկնելու պատրաս-

տակամությամբ, սրտացավ վերաբերմունքով, անմիջականությամբ, մեծ հեղինակություն ունի գիտական-մտավորական և ընկերական միջավայրում:

Մեր ավագ գործընկերոջը՝ գիտության անխոնջ մշակ Ա. Ա. Խառատյանին, ցանկանանք արևշատություն, երջանկություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ և տարիների լեցուն կյանք:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ